ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«18» դեկտեմբերի 2023թ. № 1266

ՀՐԱՉՅԱ ԱԶԳԵՐՏԻ ՇԱՀՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇԳՐՏՎԱԾ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 4-րդ կետով, որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետով, 13-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով, հաշվի առնելով, որ Հրաչյա Ազգերտի Շահմուրադյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ քաղաքում գտնվող, 06-006-0304-0057 կադաստրային ծածկագրով 0,1399 հեկտար մակերեսով հողամասի վրա 2009 թվականին ինքնակամ կառուցված բնակելի տան, բաց պատշգամբի, ամառային խոհանոցի, նկուղի, անասնաշենքի, 2010 թվականին ինքնակամ կառուցված խորդանոցի, օժանդակ շինության, ավտոտնակի, ձեղնահարկի, ծածկի և պարսպի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2089658 վկայականը վկայականը, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝

2023KMS5SU «Օլյա Տրանդաֆիլովա» ԱՁ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունը և Հրաչյա Ազգերտի Շահմուրադյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հրաչյա Ազգերտի Շահմուրադյանին (ծնված՝ 06.01.1978) սեփականության իրավունքով պատկանող 06-006-0304-0057 կադաստրային ծածկագրով 0,1399 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 59,73 քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը, 162,06 քառակուսի մետր մակերեսով ձեղնահարկը, 7,65 քառակուսի մետր մակերեսով ձեղնահարկի բաց պատշգամբը, 21,79 քառակուսի մետր մակերեսով ամառային խոհանոցը, 43,82 քառակուսի մետր մակերեսով ամառային խոհանոցի նկուղը, 12,76 քառակուսի մետր մակերեսով անասնաշենքը, 9,78 քառակուսի մետր մակերեսով խորդանոցը, 26,71 քառակուսի մետր մակերեսով օժանդակ շինությունը, 14,99 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակը, 44,99 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակի ձեղնահարկը, 27,06 քառակուսի մետր մակերեսով ծածկը և 12,25 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով պարիսպը ճանաչել օրինական:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Հրաչյա Ազգերտի Շահմուրադյանի սեփականության իրավունքը:

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի ճշգրտված հատակագիծը:

4. Սույն որոշմամբ ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

5. Հրաչյա Ազգերտի Շահմուրադյանին՝

1) համայնքի բյուջե վճարել 615 297 ՀՀ դրամ (հաշվեհամար 900245161352) օրինականացման վճար:

2) ընդունել ի գիտություն, որ սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Երեմ Գրիգորյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. դեկտեմբերի 18
ք.Սպիտակ